# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 265-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 10.08.2020թ. N 243-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 17082020-06-0031 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Անահիտ Սենիկի Պողոսյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին կայարան թաղամաս, N 18-7/1 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 10.08.2020թ. N 243-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 24.3 քմ արտաքին մակերեսով (20.0 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը՝ 20898 (քսան հազար ութ հարյուր իննսունութ) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00243 հա մակերեսով հողամասը՝ 12830 (տասներկու հազար ութ հարյուր երեսուն) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Անահիտ Սենիկի Պողոսյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2020թ. օգոստոսի 24
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 266-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ, 34-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից տրված 17.08.2020թ. տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Էնգելս թաղամասի N 24 շենքի արևմտյան մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 52.79 քմ արտաքին մակերեսով (43.3 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի Էնգելս թաղամասի N 24 շենքի արևմտյան գտնվող, 2000թ. ինքնակամ կառուցված, 52.79 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00414 հա մակերես ունեցող հողամասով:

3. Ալավերդի քաղաքի Էնգելս թաղամասի N 24 շենքի արևմտյան մասում գտնվող բնակելի նշանակության ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Էնգելս թաղամաս, N 88/1 փոստային հասցե:
4. Բնակելի նշանակության ավտոտնակի զբաղեցրած 0.00414 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Զուլիետտա Յուրիկի Աղաբեկյանին, օրինականացված ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել ավագանու նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2020թ. օգոստոսի 24
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 267-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 21.07.2020թ. N 221-Ա՝ որոշումը, սեփականության իրավունքի N 17082020-06-0026 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Սասուն Վասիլյի Սիրադեղյանն ընդունել է ավտոտնակը, տնտեսական սենյակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 1/17-12/5 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 21.07.2020թ. N 221-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, ընդհանուր՝ 93.44 քմ արտաքին մակերեսով (82.5 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը, տնտեսական սենյակը 80358 (ութսուն հազար երեք հարյուր հիսունութ) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.0075 հա մակերեսով հողամասը՝ 39600 (երեսունինը հազար վեց հարյուր) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Սասուն Վասիլյի Սիրադեղյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի, տնտեսական սենյակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 24
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 268-Ա

## ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ և 66-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշումով, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ և հիմք ընդունելով Նարեկ Արշակի Հախինյանի դիմումը, սեփականության իրավունքի N 1270184 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովա 5 շենքի բակում գտնվող՝ Նարեկ Արշակի Հախինյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի սպասարկման համար զբաղեցրած 19.0 քմ մակերեսով հողամասը՝ 15390 (տասնհինգ հազար երեք հարյուր իննսուն) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել հողամասի վարձակալ Նարեկ Արշակի Հախինյանին:
2. Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովա 5 շենքի բակում գտնվող, Նարեկ Արշակի Հախինյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սայաթ-Նովա փողոց, N 5-15/5 փոստային հասցե:
3. Օտարվող հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և համարվում է բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:
5. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2020թ. օգոստոսի 24
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 269-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 14.11.2019թ. N 362-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 09062020-06-0027 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Գայանե Աղաբեկի Վարոսյանն ընդունել է ավտոտնակը, տնտեսական սենյակը և սպասարկման համար զբաղեցրած հողամաս ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 3/6-7/1 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 14.11.2019թ. N 362-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, ընդհանուր՝ 92.62 քմ արտաքին մակերեսով (79.62 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը, տնտեսական սենյակը 79653 (յոթանասունինը հազար վեց հարյուր հիսուներեք) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00489 հա մակերեսով հողամասը՝ 25819 (քսանհինգ հազար ութ հարյուր տասնինը) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Գայանե Աղաբեկի Վարոսյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի, տնտեսական սենյակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2020թ. օգոստոսի 24
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 270-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Ֆրունզիկ Գեղամի Մակինյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 868990 վկայականը, Ծաղկաշատ գյուղի վարչական ղեկավարի կողմից տրված 24.08.2020թ. թիվ 0-045 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ծաղկաշատ գյուղում գտնվող՝ Ֆրունզիկ Գեղամի Մակինյանին, Գեղամ Ֆրունզիկի Մակինյանին համասեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Ծաղկաշատ, փողոց 1, N 1 փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 26
ք. Ալավերդի